

## ԳԱՐՆԱՆ ՄՈՏԻՒՆԵՐ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

### I

**Նորից բուրեց շունչը գարնան  
եւ յիշեցրեց քաղցր օրեր,  
կաշկանդանքից դաժան ձմրան  
Աղապատեցան հոգոյս լարեր:**

**Մօթ է գարուն... և զգում ես  
Պահ մի մոռցւած սրբիդ ցաւը,  
Կուրծքդ ուռած... սպասում ես,  
Թէ հա կլնկնի ծանր քարը...**

**Աիրուն գարուն, ինչ լաւ հիւր եմ  
իմ ցաւափանջ սրբի համար.  
Երկար արդեօք խոսփանում ես  
Զիւան ջանիս նոր արև դալ...**

### II

**Ես տանջւում եմ քո քրթիջով  
Ծիծառ անմեղ և սիրուն,  
Երբ բնութեան մանուկ շնչով  
Աւելում ես մեզ գարուն:**

**Երբեւ ազնիւ անիրոնջ մշակ  
Նորոգում ես քո բոյնը,**

Զագեր ինսամում հանում աշխարհ,  
Նորից երգում դարունը.

**Իսկ** ես, նայիր, քանի տարի  
Երգ երգեցի անընդհատ,  
Ճակապագրին բողոք արի—  
Չբացւեց ինձ գարուն. վարդ.

**Եւ** իմ բոյնը այս աշխարհում  
Դեռ մնում է աւերւած...  
Եւ բիրս կեանքի ահեղ կուռում  
Ես մի հիւլէ հալածւած...

**Ասա,** ծիծառ, թնջու անմեղ  
Քո քրքիջով մանկական  
Ես դանջւում եմ... կեանքն էլ անմեղ  
Ինձ թւում է զերեզման...

## III

0', եթէ կարող լինէի, երկինք,  
Մի շնչով հոգոյս ամբողջ փոթորիկ  
Արտայացրելու...  
Եւ կամ մի՛ յուժկու խոր հառաչանքով  
Կուրծքս ճնշող սարն վայր գլորելու,  
Այն ժամ ինձ մահը ծանր չէր թւալ  
Եւ ոչ պժգալի նորա արհաւիրք.  
Զգալով հալած վշտիս սարերը  
Հանդիսոր կներէի ես ինձ մահւան գիրկ:

## IV

**Հոգեմաշ թախիծ, սպանիչ մզքեր,**  
Թողէք հանգիստ զգայուն հոգիս,  
Կեանքումս գոնէ մի անգամ երգեր  
Ուրախ նւագել յաջողւի երգչիս:

Միշտ խոր հառաջանք, բողոք ու վայեր  
Մինչ Երբ կրծքիս դակ բոյն դրած մնան,  
Թրթռան սրգիս մղկան լարեր  
Զեր շղթաներին մինչ Երբ դիմանան:

Հոգեմաշ թափիծ, սպանիչ վէրքեր,  
Ողէք հանգիստ զգացուն հոգիս,  
Կեանքում գոնէ մի անգամ երգեր  
Ուրախ նւագել յաջողւի երգչիս.

Մի ժամ, մի' վայրկեան գէթ հանգստանամ  
Ընկղմեմ անհուն մօռացութեան մէջ,—  
Գուցէ ես նորից տանջւել կարենամ  
Ինձ վիճակ ընկած ցաւերից անվերջ...